ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

«_ԵՔԹ-ԳՀԱՇՁԲ-19/02_» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «05» «հունիսի» 2019թ., ժամը 13:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լալա Քոչար

Անդամներ՝ Քնարիկ Շահխաթունի

Արման Վարդանյան

Հռիփսիմե Մանուկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Վարդուհի Ադամյան

ՕՐԱԿԱՐԳ

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Ներկայացվեց մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը, որի համաձայն մասնակիցը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պետական հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:
2. «ԵՔԹ-ԳՀԱՇՁԲ-19/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացվել են թանգարանների նորագույն տեխնոլոգիաներով արդիականացնելու գործընթացում՝ մասնավորապես վիրտուալ իրականությամբ հավելվածների կիրառմամբ, աշխատանքները հիմնավորող պայմանագրերի պատճենները:
3. Հանձնաժողովը որոշեց «ԱՅ ԻՔՍ-ԹԵՔ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ԵՔԹ-ԳՀԱՇՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակից 1, 2, 3-րդ չափաբաժիններում:
4. Հանձնաժողովը որոշեց հաստատել «ԵՔԹ-ԳՀԱՇՁԲ-19/02» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ _4_, դեմ _0_:

5. «ԵՔԹ-ԳՀԱՇՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 13:00-ին :

Ընդունվել է որոշում՝ կողմ _4_, դեմ _0_:

6. *Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.*

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Լ. Քոչար

Անդամներ՝ _____ Ք. Շահխաթունի

_____ Ա. Վարդանյան

_____ Հ. Մանուկյան

Քարտուղար _____ Վ. Ադամյան